ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08.12.2018 *Ք. Իջևան*

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-2019 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստում: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան/
2. 2018-2019 ուստարվա երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին: /Զեկուցող՝ Կ. Պողոսյան /
3. Ընթացիկ հարցեր

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ավարտված են: Կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Ամբիոններում քննարկվել և հաստատվել են հարցատոմսերը: Վերստին շեշտադրվեց քննությունների ընթացքում դասախոսների կողմից անաչառ վերաբերմունքը: Ուսանողը պետք է քննասենյակից հեռանա իր ստացած միավորի հավաստիության համոզվածությամբ: Դեկանը ՈՒԽ և ՈՒԳԸ ուսանողներին հորդորեց ներկա գտնվել քննական գործընթացներում՝ կանխելու հնարավոր սուբյեկտիվիզմը: Բացի այդ՝ ընթացիկ քննությունները կանցկացվեն հատուկ կահավորված լսարաններում, որտեղ կիրականացվի տեսանկարահանում: Բանավոր քննությունների ընթացքը կձայնագրվի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, Շ. Գասպարյանը, Մ. Թամրազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-2019 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

Լ.ՄԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց 2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Զեկուցողը փաստեց, որ երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան մատենավարության վիճակը: Նկատվում է, որ որոշ դասախոսների մոտ կան մատենավարական թերացումներ: Այդ բացերը քննարկման և շտկման փուլում են: Զեկուցողը խոսեց նաև ֆակուլտետում իրականացված դասալսումների մասին: Դասալսումներ պարբերաբար կատարվում են երիտասարդ դասախոսների մոտ: Արդյունքները քննարկվում են, կատարվում են եզրակացություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, Շ. Գասպարյանը, Մ. Թամրազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2018-2019 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան